Գլենդելը երկարաձգում է արտակարգ դրության հրահանգների ժամկետը և ավելացնում COVID-19 համավարակի դեմ շարունակական պայքարին արձագանքելու միջոցառումները

Գլենդել, Կալիֆորնիա. 2020 թ. մայիսի 12-ին՝ երեքշաբթի օրը, Գլենդելի քաղաքային խորհուրդը երկարաձգեց արտակարգ դրության հրահանգները և ավելացրեց COVID-19 համավարակի դեմ շարունակական պայքարին արձագանքելու միջոցառումները: Փոփոխությունները հետևյալն են.

1. Արտակարգ դրության հայտարարության ժամկետը երկարաձգվեց 2020 թվականի մայիսի 15-ից հետո: Այն ուժի մեջ կմնա արտակարգ դրության տևողության ընթացքում, մինչ Գլենդելի քաղաքային խորհրդի կամ Արտակարգ իրավիճակների ծառայության տնօրենի կողմից դրա ավարտի մասին հայտարարելը:

2. Բնակելի տներից վտարման արգելքի ժամկետը երկարաձգվեց 2020 թվականի մայիսի 30-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:

    a. Վարձակալները դեռևս պարտավոր են վճարել իրենց վարձավճարները և արգելքի ժամկետի ավարտից (հունիսի 30-ից) հետո կունենան մինչև տասներկու ամիս ժամանակ՝ բոլոր ժամկետանց վարձավճարները վճարելու համար:

    b. Ընդունվել է վարձավճարների վճարման լրացուցիչ միջոց, որով վարձակալներից պահանջվում է տասներկու ամիս մարման ժամանակահատվածի յուրաքանչյուր երեք (3) ամսվա ավարտին վճարել ժամկետանց վարձավճարի առնվազն 25%-ը, եթե տանտիրոջ և վարձակալի միջև վճարման այլ պայմանների մասին համաձայնություն չկա:

    c. Վտարման արգելքը վավեր է միայն այն վարձակալների համար, ովքեր չեն կարողանում վճարել վարձավճարը COVID-19- ի հետ կապված պատճառներով, ինչպիսիք են՝ աշխատանքի կորուստը կամ COVID-19- ի հետ կապված աշխատանքային ժամերի կրճատումը, երեխաների խնամքի ծախսերի ավելացումը և այլն:

3. Առևտրային նշանակության տարածքներից վտարման արգելքը երկարաձգվեց 2020 թվականի մայիսի 15-ից մինչև 2020 թվականի հունիսի 3-ը:

    a. Վարձակալները դեռևս պարտավոր են վճարել իրենց վարձավճարները:

    b. Առևտրային նշանակության տարածքների վարձակալության համար հետ վճարման ժամանակահատվածը փոփոխվեց՝ տասներկու ամսից դառնալով երեք ամիս՝ սկսած արգելքի ավարտից՝ հունիսի 3-ից հետո: Հասարակական առևտրային ընկերությունների վրա վտարման այս արգելքը չի տարածվում:

    c. Խորհուրդը կքննարկի այս արգելքի և բացառությունների հետագա ընդլայնումը 2020 թվականի հունիսի 2-ին:

    d. Վտարման արգելքը վավեր է միայն այն վարձակալների համար, ովքեր չեն կարողանում վճարել վարձավճարը COVID-19- ի հետ կապված պատճառներով, ինչպես օրինակ՝ եկամտի կորուստը՝ կապված «Տանն ավելի ապահով է» հրամանի հետ:

4. Արտակարգ դրության բոլոր մյուս հրահանգների ժամկետը երկարաձգվել է.

a. Քաղաքապետարանի տնօրինության տակ գտնվող բոլոր զբոսայգիներում և հանգստի վայրերում բոլոր մարզադաշտերի/խաղադաշտերի, դաշտերի և սարքավորումների փակման մասին արտակարգ դրության հանրային կարգադրության ժամկետը երկարաձգվեց մինչև 2020 թվականի հունիսի 30-ը:

b. Դեմքի պաշտպանիչ միջոց պարտադիր կրելու մասին արտակարգ դրության հանրային կարգադրության ժամկետը երկարաձգվեց մինչև 2020 թվականի հունիսի 3-ը:

i. Բոլորը պետք է կրեն դեմքի պաշտպանիչ միջոցներ, ինչպիսիք են՝ շարֆերը, բանդանաները, պարանոցի փաթաթանները կամ այլ կտորե դիմակներ, երբ նրանք լքում են իրենց բնակության վայրը, աշխատանքի վայրը կամ այլ կերպ գտնվում են հանրության մեջ՝ այնպիսի հիմնական գործողությունների համար, ինչպես օրինակ՝ իրենց թաղամասում քայլելու, դեպի կարևոր նշանակության բիզնեսի վայր քայլելու կամ այդտեղից վերադառնալու կամ հանրային տրանսպորտից օգտվելու համար. այնուամենայնիվ, անձնական տրանսպորտային միջոցով միայնակ կամ միևնույն ընտանիքի անդամների հետ ճանապարհորդող վարորդներից չի պահանջվում դեմքի պաշտպանիչ միջոց կրելը, եթե նրանք որևէ պատճառով չեն իջեցնում մեքենայի պատուհանները, օրինակ՝ արագ արձագանքման աշխատակիցների, սննդի ծառայության աշխատակիցների կամ իրենց տան անդամներից բացի այլ անձանց հետ հետ հաղորդակցվելու նպատակով: Մինչև 2 տարեկան երեխաները (ներառյալ նորածինները) չպետք է կրեն դեմքը ծածկող միջոցներ: 2-ից 8 տարեկան երեխաները պետք է կրեն դրանք, սակայն գտնվեն մեծահասակների հսկողության ներքո, որպեսզի համոզվեն, որ երեխան կարող է անվտանգ շնչել և խուսափել խեղդվելուց կամ շնչահեղձ լինելուց: Շնչառական խնդիրներ ունեցող երեխաները չպետք է կրեն դեմքը ծածկող միջոցներ:

c. Վարձավճարների բարձրացման սառեցում.

i. Վարձերի սառեցումը ուժի մեջ է 2020թ. մարտի 24-ից՝ անկախ նախկինում վարձի բարցրաձման ծանուցման ներկայացման ժամանակից:

ii. Մինչև արտակարգ դրության հրամանի ավարտը տանտերերը չեն կարող վարձի բարձրացման նոր ծանուցումներ ներկայացնել, նույնիսկ եթե բարձրացումը ուժի մեջ է մտնում հրամանի ավարտից հետո:

iii. 2020թ. մարտի 25-ից մինչև արտակարգ դրության հրամանի ավարտը ներկայացված վարձի բարձրացման ծանուցումները պետք է նորից ներկայացվեն՝ հրամանի ավարտից հետո:

iv. Վարձի սառեցումը վերաբերում է Գլենդել քաղաքի բոլոր բնակելի տարածքներին՝ բացառությամբ 1995թ. փետրվարի 1-ից հետո կառուցված բնակելի շենքերից, անհատական կոնդոմինիումներից և առանձնատներից: Այն վերաբերում է նաև կացարանին կից բնակելի միավորներին և երկար ժամկետով վարձակալած հյուրանոցային համարներին:

v. Վարձավճարի սառեցման արգելքը գործում է մինչև 2020 թվականի հունիսի 30-ը։

Որպես հիշեցում՝ մինչդեռ մենք որոշ փոքր քայլեր ենք ձեռնարկում՝ թույլ տալով ավելի շատ բացօթյա գործողություններ անցկացնել և վերաբացել որոշ ձեռնարկություններ, այնուամենայնիվ, մենք բոլորս դեռևս ավելի ապահով ենք տանը: Դուք դեռ չեք կարող հավաքվել ձեր տնային տնտեսությունում ապրող անձանցից բացի այլ անձանց հետ։

Պարբերաբար թարմացումների համար այցելեք glendaleca.gov. վեբկայքը։